ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՐԵՆՔԸ

ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Դատապարտելով 1915 թվականին օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

2. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն առաջարկություն ներկայացնել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:

Հանձնարարել Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին Հայաստանի արհմիությունների խորհրդի հետ համատեղ քննության առնել և լուծել ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու հարցը, հանգստյան օրերից մեկը տեղափոխելով այդ օրը:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի
նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի
նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

22 նոյեմբերի 1988 թվականի, քաղ. Երևան